Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 1849

891.99
Z-58

3545
1844

3545
1844

19 NOV 2011
891.99
Ե-58
891.542-3
Ա-54

1844

ՅՈՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆ

ԳՐԲԱՑԻ ՍՏՐՈՒԿՆԵՐ

(ՊԱՏԿԵՐ)

1001/813
ՊԵՏԵԼԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԻՖԼԻՍ
Կ. Մարտիրոսեանցի տպարան || Тип. К. Мартиросіанцъ
Большая Ванкская № 5
1903

28602

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 2013

Дозволено цензурою. Тифлисъ 24-го декабря 1902 г.

ԳՐԻԲԱՅԻ ՍՏՐՈՒԿՆԵՐ

(Պատկեր)



Ամառնային առաւօտներից մէկն է։ Տօն օր է։ Շատ մարդիկ դիմում են դէպի կիթխաւի բնակարանը։ Ընդունարանը ներկայացնում է մի ներքնայարկ. գետինը ոչնչով չըպատած,—թաց, պատերի սուաղը թափած, մերկ աղիւսները, կարծես, յեղնաբար ժպտում են եկողի երեսին, առաստաղը փայտեայ, հին, որի տախտակները քարշ են ընկել, այնպէս որ ամեն րոպէ սպասելի է, որ նրանք կը թափուին նստած հիւրերի գլխին և կը ճահացնեն։ Առաստաղի անկիւններում մշտական բնակութիւն են հաստատել կայտառ սարդերը, որոնք չորս կողմում հիւսել են իրանց թակարդները ճանճեր և միջատներ որսալու համար։ Պատերի վրայով վեր ու վար արշաւանքներ են գործում սրնթաց օթիզները, որոնք երբեմն այցելուի գրպաններն են մտնում։ Պատի տակ դրած է հին «տախտ», որը լի է իր յատուկ բնակիչներով—փայտոջիլներով։ Չորս կողմում՝ պատերի

տակ շարուած են այլասեռ աթոռներ, որոնցից մէկի ոտն է պակաս, միւսի մէջքը կոտրած, երրորդի նստատեղին պակաս, չորրորդը բոլորովին խախուտ։ «Տախտի» վրայ—անկիւնում դրած են մի ցնցոտի մինդար և մի փայտեայ կոպիտ սնդուկ. ապա մի փոքրադիր հաստ կաշուապատ գիրք, ըստ երևոյթին Սողոմոնի «վեցհազարեանը», նրա մօտ ժանգոտ թաս լիքը ջրով, որի մէջ միքանի գարի կային, ապա մի փոքրիկ պնակ՝ խնկարան, մի սպիտակ շապիկ՝ նրման գիշերային վերարկուի։

Այցելուները շատացան, որոնց մէջ երկու ուսանողներ՝ մէկը ռուս, միւսը Հայ և նրանց հետ մի վրացի օրիորդ, մի ինտելիգենտ, ձալօներ, մամիդաներ, Թուրքեր, իմէրէլներ և ուրիշները։

Փոքր ինչ յետոյ բացուեց կողքի դուռը և երևեցաւ գրբացը։ Նա մօտ 60 տարեկան ծերունի էր, միջահասակ, հաստափոր և մեծ կարմիր քթով։ Նրա խոր ընկած աչքերը նման էին կախարդական աշխարհի հայելիների, որոնք արտայայտում էին գրբացի ներքին աշխարհի բոլոր ելևէջները։ Նա ուներ հագած լայն շալվար և արխալուղ, մէջքին կարմիր գօտի կապած։

—Բարի լիս, ասաց նա և մի ընդհանուր հայեացք ձգեց բոլորի վրայ. ապա արագութեամբ բարձրացաւ տախտին և հագնելով այն սպիտակ շապիկը, ակնոցներն էլ աչքերին դրեց ու ծալապատիկ նստեց մինդարի վրայ։

«Եա Ալլահ-Ալլահ, դօսպօդի պամիլու, դօսպօդի

պամիլու, ուփալօ շէգվիծդալէ, օրհնեալ ես տէր Աստուած, հոգոցն մերոց, փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, ամէն» սկսեց և վերջացրեց նա իր սկզբնական աղօթքը, միքանի անգամ վեր նայելով առաստաղին ու խաչակնքելով։ «Նու չէյ օչերեդ, պաժալտի»։ Առաջ մօտեցան իմէրէլները, որ ամենից առաջ էին եկել, տուին բերած խունկն ու մոմը, ելեսուն կոպէկ էլ փող։ Գրբացը վառեց մոմը, ծխեց խունկը և մոմը մօտեցնելով ջրով լի թասին, սկսեց նայել մէջը և ինչ որ մրմնջալ վրացերէն լեզուով։ Միքանի րոպէի ընթացքում նա դուշակեց իմէրէլների և միքանիսի համար, որոնք գոհ կերպով դուրս գընացին։

Մօտեցաւ մի պառաւ կին, դողդողալով տուեց գրբացին իր վերջին կոպէկները, խունկ, մոմ և լսելի ձայնով շշնջաց.

—Տէր Աստուած, դուն զիդիս, դուն լաւութին տաս իմ նաչար Օսանին, մեղք է նրա քիլիփաթը։

Գրբացը լուռ, ականջները չորս արած լսում էր հիւրերի խօսակցութիւնը, աշխատելով որսալ իւրաքանչիւրի գալու նպատակը նրա խօսակցութիւններից և արտայայտութիւնից։

—Դէդի, ձեռդ քսի մումին, ու փիքը արա, ինչ որ ուզում իս, հրամայեց գրբացը։

Պառաւն իր դողդոջուն ձեռքով միքանի անգամ շօշափեց մոմը, խաչակնքեց երեսն ու անհամբերութեամբ սպասեց գրբացի դուշակութեանը, նայելով մերթ նրա բերանին, մերթ թասին։

—Իստի մի հիւանդ կնիկարմատ է շանց տալիս, դուղնքումը պարկած, էտէնց է, խօսեց գրբացը։

—Հա, վուրթի, էտ իմ Ցանն է, իժում, լիս չը կամ կշտին, հարցրեց պառաւը։

—Մուլաի, հա, էստի մի մարդ էլ է երևում, հա, էս էլ դոխտուրն է, հօրէս, դուն էլ դուս էկար։ Մադրամ, դէդի, դեղերն ու դոխտուրն վունչինչ չեն օգնի հիւնդին, էնդուր որ, նրա հիւնդութինը Բոլնիսի Սուրբ Գէորգիցն է, վախտով նրան մի մատաղ իք խօստացի, ու չէք կատարի, ու նա էլ չարացել է։ Դուք կէհաք նրա դուռը, օխտը օր ու գիշեր կու մնաք, մի մատաղ էլ կ'օնիք ու նրա նաբանէմէն կու խմիք, էնչախը կուպրծնի հիւանդը։

—Վոյ, վոյ, վոյ, լիս նրա սուրբը զօրութենին մեռնիմ, մրմնջաց պառաւը երեսը խաչակնքելով։

—Էլ վունչինչ, դէդի, էդքան, ընդհատեց գրբացը և ստացածները ձդեց մօտի արկղը, որի մէջ մեծ քանակութեամբ խունկ ու մոմ կար։

Այսպէս շարունակում էր դուշակութիւնը եկողների համար։ Մէկը գնում էր, միւսը գալիս. խոնաւ ու խեղդող օդը բոլորովին ապականուել էր խուցում, ծխախոտի ծուխը ոչ մի ելք չունէր և մնում էր սենեակի մէջ։ Զարմանալին այն էր, որ քնքոյշ օրիորդները, փափկաւուն տիկինները, շքեղ հագնուած ղինուորականները և միւս ինտելիգէնտները հասարակ դասակարգի հետ խառն նստում էին կեղտոտ տեղերում և ծծում ապականուած օդը միմիայն

այն յոյսով, որ շուտով կ'իմանան իրանց շրջապատող շատ գաղտնիքներ։

Փոքր միջոց գրբացը վերցրեց աչքերից ակնոցները հանգստանալու համար։ Նա հանեց գրպանից «բռնօթու կօլօփը», սկսեց ախորժակով ներս հոտոտել, միևնոյն ժամանակ խօսելով սրա նրա հետ, միքանի անհրաժեշտ նախապատրաստական գիտելիքներ կորզելու նպատակով։

—Հափսա, ա ա ա, հափսա, փռշտաց նա բռնութու ազդեցութիւնից։

—Խէր, սաղ ըլիս, առողջութիւն, բուդտէ ըզդարօվի, լսուեցին չորս կողմից։

—Բլաղադարի զօսպօդի, բլաղադարի, սպասիբօմ, գլուխը տմբացրեց գրբացը և գրպանից մի մեծ դունաւոր կեղտոտ թաշկինակ հանելով, մաքրեց քիթը ու բեղերը։

—Նու պաժալտի, հրաւիրեց նա։

Մօտեցաւ վերոյիշեալ վրացի օրիորդը, որ ուսանողների հետ էր եկել, տուեց մի հատ 50 կոպէկանոց, ներողութիւն խնդրելով խունկ ու մոմ չը բերելու համար։

—Նիչավո, նիչավո, եա պալաժու, ասաց գրբացը, վերցնելով 50 կոպէկանոցը։

—Իտո, տի, բարիշնա, խօչիս դլեա սէրբէ ուզնատ սչաստիէ, սկսեց դուշակել, տվոյ իմեա Ելենա, տանկ, հարցրեց նա այդչափ միայն լիշելով իւր լսածներից։

—Նետ, Լեօլեա, ա նէ Ելենա, ուղղեց օրիորդը։

—Դա, վսեօ բավնօ, ըրբ՞ վօտ ադին մալադօյ կրասիվի ափիցէր խօչիտ տեբէ վդեատ ժենա, տակօյ վօլօսի, գլազա, բաղատի, մագրամ, ադին դեվօչկա խօչիտ եվօ, ի վսեօ մեշաետ տվօյ սչաստիէ, վ՞օտ, վ՞օտ, ցոյց տուեց մատով ջրի մէջ։

Օրիորդը ժպիտն երեսին կռացաւ իւր աչքերով տեսնելու փեսացուին և այն չարանախանձ աղջկան, բայց ոչինչ չը նկատեց։

—Տամ նիչեվօ նէ ուվիդիշ, Լեօլեա, դարձաւ օրիորդին հայ ուսանողը։

—Ըշտո՞, ա՛յ. վօտ, սմատրի, վրայ բերեց գրբացը ցոյց տալով Թասի մէջ։

Ուսանողներն ու օրիորդը մօտեցան և սկսեցին ուշադրութեամբ նայել ջրի մէջ։ Գրբացը մոմը այնպէս բռնեց, որ նրանց ստուերներն ընկան ջրի մէջ, որ և տեսան նրանք։

—Դա՛, դա՛, Կօլեա, վիդի՞շ լիդէյ, ասաց զարմանքով հայ ուսանողը։

—Դա՛, դէյստվիտելնօ, նօ, ղդէ՞ տամ ափիցէր, հարցրեց Կօլեան։

—Ափիցար ուշօլ, միջամտեց գրբացը, էտօ գօստի։

Օրիորդը լցուեց բերկրանքով ու շարունակ ժըպտում էր։

Մինչ ուսանողներից մէկի համար սկսում էր դուշակել, երբ յանկարծ ներս մտաւ մի ոստիկանական վերակացու։ Գրբացը վայրկենապէս շփոթուեց, կարծելով, որ արգելելու էր եկել. բայց երբ ոստիկա-

նական վերակացուն ակնածութեամբ նայելով նրան, հեռու կանգնեց, գրբացը հանգստացաւ։

—Վի զադաՔ ժելաետէ, հարցրեց նա։

—Դա, դա՛։

—Պաժալտի, վի չելավէկ դէլնօյ, նի մօժեշ պադաժդաթ, սադիս։

Օկօլոդչնին առանց մերժելու, մօտեցաւ նստեց նրա մօտ, տալով միմիայն 30 կոպէկ։

—Նու, զադումայ, ըշտօ խօչիշ, ի բուկա մադայ սվէչի, ասաց գրբաց Սօսօն։ Զդէս վիդնօ ադին ակալօչնի, մալադօյ, բէզ բարադա, խարօշիյ չելավէկ, խարաշօ սլուժիտ, դա, պօսլէ ադին, դվա, տրի, չիթիրի, իլի դէն, իլի նէդէլի, իլի զօդ բուդէտ պըրիստավ։

—Նօ դէյստվիտելնօ եա՞, էտօ ակալօդչնիյ, պասմատրիտէ խարաշէնկօ, հարցրեց նա ուրախ արտայայտութեամբ, կամենալով աւելի հաւաստիանալ գրբացի ասածներին։

—Դա, դա, էտօ վի, վօտ, պնդեց գրբացը, աչքերը ճպպացնելով ու նայելով Թասի մէջ. պակա նիչավօ բոլշի։

—Նօ սկօրօ՞ բուդէտ էտօ, հարցրեց կրկին անգամ վերակացուն։

—Նիզնայու, իլի չիթիրի դէն, զօդ, նէդէլի, բօղ զնայիտ։

Օկօլոդչնին զոհ դուրս գնաց։

Նրանից յետոյ մօտեցան ուսանողները, որոնց համար գրբացը սիրային դուշակութիւններ արեց, նոյն

ռուսերէն լեզուով, որ իբր թէ զանազան օրիորդներ սիրահարուել են նրանց հետ...Սրանք էլ գոհ դուրս գնացին։

Գրքացը ընդհատելով զուշակութիւնը, փակեց սնդուկը և գնաց միւս սենեակը հանգստանալու։ Նրա գնալուց յետոյ սկսուեց ընդհանուր խօսակցութիւն։

—Զարմանալի բան է, ինչպէս խիստ թեամբ գտնում է անունը, ցանկութիւնը. յարեց բարձրաձայն մի պարոն միւս ցածբսհասակ պարոնին, որ երկու տիկինների հետ զրցում էր, դուք ինչ կասէք, ճիշդ է զուշակում։

Ճիշտ է, այո, պատասխանեց միւսը, և այն աստիճան, որ ամենակրթուած մարդն անգամ կը հաւատայ այս բանին. չընայած գիտութիւնը թոյլ չի տալիս ընդունել գրքացութիւն։ Ես, օրինակ, ըրը՛, արտասահմանում ուսանող եմ եղել, բաւականաչափ կրթուել եմ, և վայել չէ ինձ հաւատալ այսպիսի բաների՝ բայց իրականութիւնը, գործնականը ոչնչացնում է տեսական հակառակ կարծիքը և ստիպում է հաւատալ, այժմ, մենք ըրը՛, եկել ենք լոկ հետաքրքրութիւնից դրդուած։

—Երևակայեցէք, ես էլ չէի հաւատում, բայց այժմ հաւատացի գրքացութեան, տեսնելով այս ծերունու ճիշդ զուշակութիւնները, միջամտեց տիկիններից մինը։

—Ձատերը հիպնոտիզմով են բացատրում այս երևոյթը, շարունակեց երկրորդ մարդը. բայց այս տգէտ ծերունին ինչ գիտէ, ինչ է հիպ-

նոտիզմը. մնում է միայն հաւատալ ակամայից։

—Պարոն ասեմ, ես գիւղական ուսուցիչ եմ և սրա մօտ գալուս պատճառն այն է, որ մեր գիւղի մօտակայ լեռներում մի տեղ ոսկու հանքի նշաններ են երևում. այդ ոչ ոք չէ նկատել. այլ միայն ես գիտեմ և գրել եմ այստեղ լաւ ծանօթներիցս մէկին խորհուրդներ հարցնելու. նա էլ ինձ նամակով յայտնեց, որ այստեղ կայ մի նշանաւոր գրքաց, որը կարող է ճշտութեամբ ասել հանքի տեղը և ձեռք բերելու միջոցները։ Այժմ այդ նպատակով եմ եկել։

—Ձեռաց կու իմանայ սա, վուրթի, վրայ բերեց սևազգեստ, գլուխ կապած մի կին, տեղը կու գտնի ու նշանց կուտայ քիզ։

Դեռ շարունակուելու էր խօսակցութիւնը, երբ դուռը ճռռաց և գրքացը ներս մտաւ, նստեց իր տեղում ու. շարունակեց զուշակելը։ Մօտեցաւ մի կին։

—Դուն հիւնդի համա իս էկի՞, հարցրեց նրան գրքացը։

—Չէ, բիձա, ես մի բան եմ կորցրի, ու շատ իմ ման գալիս, չիմ գտնում։ Գնացի ուրիշ շատ կիթխաւների մօտ, համա ոչինչ չիմացան, պատասխանեց կինը։

—Ամա ինչ ընդրանց բանն է իմքին գտնիլը, նրանք օյլնբազներ ին հա՛, վուրթի, ինչ իս կորցրի, օսկեղէն կուլի, էրէստ խաչակնքէ։

—Չա, բիձա իրեք հատ լաւ օսկի մատնիքներ ու մի ջուխտ անկջի օղ, ասաց նա խաչակնքելով երեսն ու ձեռը քսելով մոմին։

—Ափսուս՝, բացականչեց գրբացը, փոքր ինչ լռութիւնից յետոյ, նայելով ջրի մէջ, դողցիլ ին, ու գողն էլ Ռուսէթ է գնացի, վունչինչ չիս կանայ անի:

—Վոյ քոռանամ իս, գրՈ՞ւստ, շփոթուեց կինը:

—Հա, գրուստ:

—Բաս չիմ կանա՞յ գտնի գողին:

—Չէ, վուրթի, նա ծախիլ է ու պրծիլը, էլ վունչինչ չի ըլի:

Կինը գլխիկոր դուրս գնաց:

Ահա մի լաւ հագնուած պարոն, ակնոցներն աչքերին անվստահ քայլերով մօտեցաւ բաց դռան և հարցրեց.

—Գրբաց Սօսօն այստե՞ղ է բնակւում:

—Հրամանքիս, աղա, էստի իմ, համեցէք, ըշտապով պատասխանեց գրբացը:

Պարոնը նեղս մտաւ և նստեց մի անկիւնում, կարծես չուզենալով ցոյց տալ իր այստեղ ներկայ լինելը:

Նրա հայեացքը արտայայտում էր պղտորուած մտքի ու յուսահատութեան արտացոլումներ. ճակատի կնճիռները, որոնք մերթ երևան էին գալիս, մերթ հալթւում, արտայայտում էին վշտի ու թախիծի հետքեր. նրա կրծքից յաճախ դուրս էին թռչում հոգւոցներ:

Գրբացը բոլորին ճանապարհ ճգելուց յետոյ, մօտ հրաւիրեց պարոնին:

—Հը, վուրթի, էրևում է մի դարդ ունիս, խոսեց ցաւակցական եղանակով գրբացը: Ապա հանեց գրպանից բռնութին ու հոտոտեց:

—Հ՛ափսը—հա՛, հաա՛, հ՛ափսը, փռշաաց նա, խէ՛ր, Տէր Աստուա՛, հալբաթ գործդ յաջող կուլի, պարուն:

—Երանի թէ եղբայր, յուսահատութիւնս կատարեալ է. յուսոյ կայծ մնացել է այսպիսի սնապաշտութիւը:

—Հրամանքիս, հրամանքիս, կրկնում էր շարունակ գրբացը, չը հասկանալով ոչինչ նրա ասածներից:

—Միայն նախ կը խնդրեմ ձեզ իմ գործս գաղտնի՛ք պահել, ոչ ոքի չասել: Ես բժիշկ եմ, արդէն հինգ տարի ամուսնացած: Բայց իմ ընտանեկան սուրբ յարկը պղծեց կինս, այն անզգայ և մոլորուած աղջիկը:

—Ներողութիւն, պարուն, քիչ էնէնց խօսի, վուր յիս էլ հասկանամ, դու խուրը գրափար իս խօսում, հա՛, լիժում:

—Կինս մի ուրիշ մարդու հետ, մի աֆիցէրի հետ ծածուկ յարաբերութիւններ ունի, շարունակեց բժիշկը յուզուած. որքա՛ն աշխատում եմ նրան յետ կանգնեցնել այդ վատ ընթացքից, բայց չի լսում: Այժմ, իմ միակ յոյսս մնացել էք դուք, ասում են, որ դուք այդպիսի գործերից լաւ էք հասկանում. մի միջոց գտէք նրան դսպելու: Ինչքան փող կամենաք վերցրէք:

—Վա՛, պարուն դօխտուր, փեշակս ի՞նչ է, էս-

ղադա մարդս էտ փէշակում իմ ծերացի, պատասխանեց գրբացը։

—Ուրեմն, խնդրեմ, յանձն առէք, սկսեցէք։

—Լաւ, լաւ, շատ լաւ, համա, բրբ՞ տաս թուման կուհասնի իմ ջսփահախս։

—100 բուբլի, ինչ է՞ք ասում. միթէ՞ այդքան թանգ։

—Վա՜, ինչ իս հրամանք անում, պարուն, յիս խօ բաղկալ չիմ, վուր աւել դին դնիմ, դրուստն էտէնց է։ Ախր էստու համա դեղ պիտի ապսպրիմ Կիտաեմէն, էն թաւուր թանգ է էտ դեղը, վուր մի կաթիլը յիրիք թուման կաժենայ։

—Ի՞նչ դեղ։

—Վա՜, բաս առանց դեղ վո՞ւնց կուլի, դուն հիւրընդին առանց դեղի խօ չիս կանայ սաղցնի, էնէնց էլ յիս։

—Շատ լաւ, բայց ե՞րբ կը լինի պատրաստ, հարցրեց բժիշկը, ստիպուած լինելով վճարել պահանջը։

—Մի ամսից յետոյ։

—Միթէ՞ այդքան ուշ, խնդրեմ շուտ արէք, ինչ անելու էք. մի ամիս էլ համբերել կնոջս անհաւատարմութեանը, ո՛չ, ո՛չ, չեմ կարող։

—Ախր Կիտաեմէն ինչկլի թիվլիս դեղը մի ամսից վաղ չի կանայ դայ։ Համա թէ խիստ շտապով իս ուզում, մի էրկու թուման էլ աւել տու, էն չաիը ջալդ կուլի։

—Այդ էլ կը տամ, վրայ բերից բժիշկը, միայն ի սէր Աստուծոյ օգնեցէք ինձ։

—Բաս շատ շուտ կուլի ջադօն, մի շաբաթ չի քաշի։ Դու՞ կը բերիս քու կնկայ մաղէմէն ու հին ոտնամանի կաշին, որ յիս նրանցով ջադօն շինիմ։

—Շատ լաւ, շատ լաւ, բայց խնդրեմ...

—Արխէին կաց, պարուն դօխտուր, ընդհատեց նրան գրբացը, հէստի ջադօ շինիմ, վուր կնիկդ քու վուտնիրը լպստի, մինչի մահ պաշտէ քիզ, հիմի իմ փուղի կէսը տու, վուր սկսիմ։

Բժիշկը մեքենաբար նրան, քսակը հանեց և տուեց գրբացին 60 բուբլի։

—Ուրեմն բերեմ կնոջս մաղից և հին կոշիկներից մի կտոր կաշի, էլ ուրիշ ոչինչ։

—Հա, հա, վուրթի, էլ վունչինչ։

—Շատ լաւ, ցտեսութիւն, շնորհակալ եմ, միայն խնդրեմ ծածուկ արէք ամեն ինչ և աշխատեցէք. ցտեսութիւն, ասաց բժիշկն ու դիմեց դուրս՝ լցուելով կնոջը սանձահարելու յուսոյ կայծով, և ըշտապով հեռացաւ։

Իսկ գրբացը ուրախ-ուրախ ժողովեց բոլոր փողերն ու գնաց կնոջ մօտ։

—Հ՞ափսը՞, հա՜, հաա՜, հ՞ափսա՜...

—Խէր, խէր, Աստուա՛ծ, բացականչեց կինը նայելով ամուսնու երեսին։

—Խէր է խէր, Փէփէլ ջան, էսօր Աստուա՛ծ մինձ-մինձ տուտուցներէմէն էր ղրկի ինձ մօտ, հ՞ափսը՞, հ՞ափսը՞... օխա՛յ, ինչ լաւ բուռնութի է՞...

«Ազգային գրադարան»
NL0332542

28602